ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2764-Ա « 23 » հուլիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, Զ.ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ՓՈՂՈՑԻ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱԿ ԹԱԹՈՍԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արտակ Թաթոսի Փանոսյանի (ծնված 02.01.1962թ.) դիմումը: Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Զ.Քանաքեռցու փողոցի 6-րդ նրբանցքի հ.21 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 629.41քմ, որից 393.20քմ մակերեսով հողամասն Արտակ Թաթոսի Փանոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.06.2021թ. հ.08062021-01-0234 վկայականը):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 15.11.2022թ հ.01-0906, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 27.12.2022թ. հ.17459 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.11.2022թ. հ.20-Եղ-Դ-95202-22 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Զ.Քանաքեռցու փողոցի 6-րդ նրբանցքի հ.21 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Զ.Քանաքեռցու փողոցի 6-րդ նրբանցքի հ.21 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արտակ Թաթոսի Փանոսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 393.20քմ մակերեսով հողամասին կից 236.21քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 236.21քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ